Մարիաննա Հակոբյան

Հիշողությունները կգրավեմ

Վեպ

ԵՐԵՎԱՆ
2026

ՀՏԴ 821.19-31 Հակոբյան
ԳՄԴ 84(5Հ)-44
Հ 177

Հակոբյան Մարիաննա
Հ 177 Անունները չփոխե՛լ / Մ. Հակոբյան.- Եր.:
Newmag, 2026.- 168 էջ:

Լյուսին մոր մահից հետո նրա աշխատասենյակում գտնում է երկու թղթապանակ: Դրանցում մայրը պատմում է 1999-ին Բաղրամյան պողոտայի տներից մեկում տեղի ունեցած դեպքի մասին, որը երկու տասնամյակ անց պետք է դառնա քրեական գործ, սակայն վաղեմության ժամկետը խառնում է բոլորի խաղաքարտերը:

Լրագրող Լյուսին հետաքննություն է սկսում՝ չպատկերացնելով, որ իր բոլոր վախերը նոր կյանքով են ապրելու: Նա հայտնվելու է նույն տանը, որտեղ մայրն է բռնության ենթարկվել, ու կանգնելու է ամենաբարդ հարցի առաջ:

Ի՞նչ կթացահայտի երիտասարդ լրագրողը, որի հետաքննության առանցքում իր ծնողներն են ու նրանց մութ անցյալը: Նրա մոր թողած ձեռագրերը գեղարվեստական տեքստե՞ր են, թե՞ անձնական օրագիր: Եվ գլխավոր հարցը՝ Լյուսին պե՞տք է իմանա այն ամենը, ինչ ծնողները խնամքով թաքցրել են երկար տարիներ: Արագ ընթացող վեպ-հետաքննություն, որի ընթացքում գլխավոր հերոսուհին գտնում է պատասխաններ, որոնք չէր էլ փնտրում:

ՀՏԴ 821.19-31 Հակոբյան
ԳՄԴ 84(5Հ)-44

ISBN 978-9939-482-12-5
Մարիաննա Հակոբյան «Անունները չփոխե՛լ» © 2026, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հրատարակության հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

18+ Գիրքը նախատեսված է 18 տարեկանից բարձր ընթերցողի համար: Գրքում կան էրոտիկ տեսարաններ և սեռական բնույթի նկարագրություններ:

Բովանդակություն

Գլուխ 1 | Մադոննան 15

Գլուխ 2 | «Դուդու» 37

Գլուխ 3 | Հոկտեմբերի 27, 1999 65

Գլուխ 4 | Նախկին պատգամավոր, ներկա նախարար 83

Գլուխ 5 | Հռոմի պապը friend request ուղարկեց 111

Գլուխ 6 | Հոգնածներ ու բեռնավորվածներ 123

Գլուխ 7 | Գլխակեր «տուշոնկաներ» 137

Գլուխ 8 | Արժե՞ր որ 147

Մամա

— Քեզ հետ ուզում է հանդիպել պարոն Ա.-ն,– ասաց նա: — Այդ հանդիպումը կփոխի ամբողջ կյանքդ:

Աստվածներին հանդիպելու փորձ չունեի: Ամբողջ կյանքս փոխելու մասին չէի մտածել, միայն քիթս էի ուզում փոքրացնել: Հայաստանում այդ տարիներին նոր-նոր էին սկսել պլաստիկ վիրահատություններ անել:

— Վաղը, ժամը 17:00-ին, կգամ քո հետևից:

— Հարմար է-հարմար չէ: Ուզում եմ-չեմ ուզում: Любит-не любит*:

— Կարծում եմ՝ հասկանում ես, որ հնարավորությունը բաց թողնել պետք չէ:

Նա պատրաստված էր, տիրապետում էր մանր ձկներին կերակրելու նուրբ արվեստին, իսկ ես այդ ժամանակ 21 տարեկան էի, որը շունչը պահած սպասում էր ակվարիումից օվկիանոս

* Любит–не любит (ռուսերեն) – սիրում է-չի սիրում: (Բոլոր ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

տեղափոխվելուն: Ամեն անգամ փորձում եմ ավելի խոր գնալ, հիշել՝ ովքե՞ր կային այդ նավում, ի՞նչ կար նրանց մտքին, ո՞վ էի այդտեղ, և ալիքներն ի՞նչ էին ուզում ինձ զգուշացնել: Երբեմն կասկածում եմ՝ նավարկությունը ծովո՞ւմ էր, թե՞ իմ հիվանդ գլխում:

Երբ Աստծուն հանդիպեք, ի՞նչ կհարցնեք: Պատկերացում չունեի, բայց, որպես լրագրող, պարտավոր էի պատրաստվել՝ տեղեկություն հավաքել, կանխատեսել հնարավոր հարց ու պատասխանների շրջանակը: Մտքովս տարբեր սցենարներ էին անցնում, բայց այն, որ այդ հանդիպմանն ինձ նոր անուն են տալու, ամենահետաքրքիր ու սարսափելի անակնկալն էր:

Փոփոխություն ասելով նախ և առաջ պատկերացնում էի արտաքին փոփոխությունները: Մտածում էի՝ փոքր քիթն ավելի մեծ դռներ կբացի, ավելի լավ աշխատանք կգտնեմ, ավելի շատ փող կաշխատեմ, կտեսնեմ բոլոր օվկիանոսներն ու ծովերը: Սա իմ աշխարհիկ ծրագիրն էր, բայց վերևներում «Վերափոխման ծրագիր» էին պատրաստել: Ալիքները խառնող ծրագիր:

Հիշում եմ՝ ինչ էի հագել այդ օրը: Կարևոր հանդիպումներին հոլիդեյ ջինս էի հագնում: Թաքցնելով բարձրակրունկները՝ հոլիդեյը ոտքերս վիզուալ ավելի երկար էր ցույց տալիս: Սպիտակ վերնաշապիկ, մոխրագույն վերարկու: Քենեդու կնոջ պայուսակով էի: Այդպես էի անվանում դարչնագույն պայուսակս: Պատմական հին պայուսակի տեսք ուներ: Մեջքը ձիգ էր, էլեգանտ էր թե՛ դրսից, թե՛ ներսից: Պայուսակիս բռնակից էի կապել անբաժան շարֆիկս: Նվեր էր թանկ մարդուց, որին պատրաստվում էի խաբել:

Հոկտեմբերի 17, 1999, գործնական հանդիպում:

Վարորդն իջավ, մեքենայի դուռը բացեց, նստեցի: Հանդիպման կազմակերպիչն առջևում էր նստած: Ասել, թե ճանաչում

էի նրան, սուտ կլինի: Նրան բոլորն էին ճանաչում, բայց ոչ ոք չգիտեր: Այն մարդկանցից էր, որոնք որոշում են երբեք որոշակի չդառնալ: Որոնք հազար դեմք ունեն, բայց նույն դեմքով կարող են խոսել ամենալավ ու սարսափելի երևույթների մասին: Նույն կերպ սառն ու հանգիստ կարող է լինել միայն մահացած մարդը, որը ճակատագրի ծաղրով դագաղում վերջապես գտել է իր ներդաշնակությունը: Ամեն անգամ նրան հանդիպելիս՝ մտածում էի՝ ի՞նչ կա նրա գլխում, հոգում ու սառնարանում:

Անդրկուլիսային գործիչները մարդակերներ են լինում, անթափանցելի մարդիկ վախենալու գաղտնիք են ունենում: Նրա սառցարանից արյուն է հոտում, բայց խիղճը հանգիստ է: Եթե հոգի ունի, հոգու խորքում միշտ արդարացում ունի: Անգիր հիշում եմ նրա տեքստերը՝ «Թեթև տար», «Ամեն ինչ արդար է», «Ամեն ինչ օրինաչափ է», «Լայն նայիր աշխարհին»:

Խոսքի վարպետ էր, տիրապետում էր հռետորության, համոզելու արվեստին, տոփեստների գլխավոր ճարտարապետը կարող էր լինել սոկրատյան ժամանակներում: Լեզվանի քամելեոնը գիտեր՝ որ գույնն ում վրա ինչպես է ազդում: Գոնային հրավառությամբ կարողանում էր արթնացնել մարդկանց ներսի երեխային, իսկ կանաչով՝ գնել մեծին: Հակակրելի կերպար էր:

Դեռ մանկուց ինչ-որ բան սխալ ուղով էր գնացել, ցանկություններն առաջին տեղում էր դրել, ծծակից չէին կարողացել ժամանակին կտրել, դրա համար էլ անծնոտ էր ստացվել: Նյարդերս չէին դիմանում նրա ինքնավստահությանը, միաժամանակ հասկանում էի, թե ինչի վրա էր հենվում: Ծածուկ ճշմարտություն, գաղտնի գիտելիք կրող, սահմաններից դուրս խորհող մեղուզա էր՝ հոսանքներ ստեղծող, դանդաղ շտապող ու սահուն տեղավորվող: Իր լուռ գոյությամբ, հանգիստ ուժով քանդող տեսակ էր:

Ճանապարհին ինձ վախեցրեց: Ձեռքն օձի պես սողաց դեպի հետևի նստատեղ: Ոտքերս մի կողմ քաշեցի: Ափը բացեց: Վարորդին նայեցի, որը դիմացս էր նայում, բայց, վստահ էի, տեսնում էր: Առաջին պահից կասկածում էի, որ լեզու չունի: Միայն լեզուն կտրած մարդու աչքերը կարող են այդքան խոտան լինել: Ինձ մեջքով նստածը, ափը մուրացկանի պես պարզած, ինչ-որ բան էր ուզում: Խխունջի պես կլորացել, պատուհանին էի կպել: Ձե՞ռքս է ուզում, ո՞տքս, գուցե գումա՞ր:

— Ծամոն ունե՞ս,– հարցրեց:

Վարորդը ձեռքը մեքենայի ազդանշանին դրեց: Ինձ թվաց՝ անկեզու մարդը փորձում է ինչ-որ բան հասկացնել, ասել՝ քանի դեռ ուշ չէ, փակիր Ջումանջին ու փախիր: Բայց այդ պահին, եթե անգամ բոլոր եկեղեցիների զանգերը միասին ղողանջեին ու ազդարարեին սպասվող վտանգը, խուլ կձևանայի, միայն թե որևէ բան չփչացներ սպասումս: Ծամոնը բերանիցս հանեցի, դրեցի ձեռքի մեջ:

Նիզակաձև բարձր դարպասները բացվեցին, մեքենան ներս մտավ: Վիլլա Բորգեզեին էր նման, որի նկարը նամականիշի վրա էի տեսել: Հսկա, կանաչ տարածք էր: Սև, միանման հագուստով երկու երիտասարդ մեզ ուղեկցեցին սյուներով շենքի մուտքի մոտ: Բարձրահասակ, թիկնեղ, փայլուն մազերով երկու Ապոլոնները զոյգ եղբայրներ էին:

Մտանք ուրիշ աշխարհ: Պատերին տասնյակ նկարներ էին, շուրջս՝ քանդակներ: Մինչ ուզում էի հասկանալ՝ պատկերասրահո՞ւմ եմ, թե՞ երազում, դիմացս հայտնվեց ամենագեղեցիկ պատկերը: Երբևէ հանդիպե՞լ եք վախենալու աստիճանի գեղեցիկ մարդու, որ մտածեք՝ բարի՞ք է, թե՞ չարիք: Պարոն Ա.-ի օգնականն էր, մեզ ուղեկցեց նրա աշխատասենյակի մոտ ու

խնդրեց սպասել: «Անթափանցելի մարդը» մոտեցավ նրա սեղանին, երևում էր՝ ճանաչում էին իրար, ինչ-որ բան քչփչացին, հետո ասաց, որ գնում է, եթե կարիք լինի, կհայտնվի:

— Քեզ հաջողություն,– հեռանալիս աչքով արեց:

Ծնոտը շարժվեց, ծամած ծամոնս բերանում էր: Այն մարդկանցից էր, որոնք միշտ վախենում են, որ բերանից վատ հոտ կգա, բայց հոգու երախից է նեխածի հոտ փչում: Ստամոքսի հետ էլ խնդիր կունենա, այդքան մարդու միս ծամողին չեն օգնի նույնիսկ աղն ու տոդան: Աչքս չէի կարողանում կտրել համակարգչի առջև նստած հրեշտակից: Հասակակից կլինեինք: Ուզում էի հասկանալ գեղեցկության ֆենոմենը. երկար պարանո՞ցն էր նրան այդպիսին դարձնում, դեմքի հատակ եզրագի՞ծը, կրծքավանդակի դուրս ցցված արիստոկրատ ոսկորնե՞րը, թե՞ իդեալական ուղիղ քիթը: Մարդ-կարապ էր՝ բարձրահասակ, սլացիկ: Շուրթերը հարբած բալի պես գրավիչ էին. քաղցրակերները դրանց, անկախ սեռից, թեկուզ մտովի ուզում են դիպչել: Փայլուն էին մաշկը, մազերը, ամեն ինչ՝ բացի աչքերից: Կարմրած կոպերի տակ սև կատուներ էին նստած: Կյանքում առաջին անգամ էի դեպրեսիվ հրեշտակ տեսնում:

— Կարող եք ներս մտնել,– ասաց:

Անեզր աշխատասենյակում անեզր մարդն էր, որի հետ սպասվում էր ամենաերկար նավարկությունը: Աչքովս ընկավ սև պիջակի տակի ժիլետը, որից շղթա էր կախված դեպի գրպանը: Փոքր ժամացույցը նրա ավագ խորհրդականն էր, սլաքներն ամեն ինչ անում էին, որ ժամանակը նրա օգտին աշխատի: Ժամանակի վստահությունը շահած այդ մարդը կարողացել էր կառավարել ժամանակը, հակառակ դեպքում նրան այդքան բան չէր տրվի: Մոտեցա, ձեռքս մեկնեցի: Ողջունեցինք միմյանց:

— Նստեք,– ասաց:

Հենվեց, կարելի է ասել, կիսով չափ նստեց սեղանին, մի ոտքը կարկինի պես շրջանաձև պտույտ կատարեց, կոշիկի քիթը սեղմեց հատակին: Մի փոքր բարձրացրեց կոկիկ քթի վրա տեղավորված քառակուսի ակնոցն ու հարցրեց.

— Ի՞նչ եք մտածում:

Աստվածները գիտեն, բայց հաճախ փորձում են: Վախեցա անկեղծ չլինել ու ասացի.

— Ձեր արտաքինի մասին:

Ժպտաց:

— Եվ ի՞նչ:

— Հայրս Ձեր սանրվածքն անվանում է «հետ տվեք մեր հողերը»:

Կիսափակ աչքերով ծիծաղի մեջ չափը չճանաչող հմայք կա: Ձեռքը տարավ մազերին, բայց շարժել չկարողացավ: Ամեն մազ իր տեղում էր, հատակ ֆիքսած: Իրականում ավելի գրավիչ էր, քան հեռուստացույցով: Երբեք մինչև վերջ չէի լսել, թե ինչ է ասում, խոսքի կեսից ալիքը փոխել էի: Քաղաքականության մեջ բոլորին համարում էի նույն լղոզված կերպարը: Բայց հիմա իմ դիմաց կանգնած, մազերը հետ սանրած տղամարդը մագնիսի պես անապասելիորեն ձգում էր: Ներքին վստահություն ունեի, որ ժամացույցի մեխանիզմի պես հին ու խորհրդավոր այդ մարդն իմ ուսուցիչն է դառնալու:

— Հիմա ինչի՞ մասին եք մտածում,– նորից հարցրեց:

— Ձեր ժամացույցի:

Մոտեցավ, հանեց գրպանից ու պարզեց ինձ: Մատներս կպան նրա ձեռքին, հոսանք անցավ, ջերմությունը հաճելի էր, բայց դեռ չգիտեի, որ բարձր վոլտերի հետ գործ ունեմ: Ոգևորության

ալիքին շատ արագ փոխարինելու է գալիս մտատանջությունների ալիքը: Ձեռքումս պտտեցի ժամացույցը, նայեցի, վերադարձրի: Բացեց կլոր ժամացույցի դիմապակին:

— Կուզե՞ս հետ տալ ժամանակը,– հարցրեց մտերմիկ, անցնելով դու-ի:

— Ոչ:

— Իսկ կուզե՞ս առաջ տալ:

— Այո: Կուզեմ քթիս վիրահատությունը բարեհաջող ավարտված լինի, կապտուկներն անցած լինեն, ծովափի մոտ սպիտակ գինի ու մեդիաներ վայելեմ:

Մատով պտտեց սլաքը: Հանկարծ ես և նա ծովի մոտ մի սրճարանում ենք: Ձեռքս տարա քթիս:

— Նոր քիթ: Դու, ի՞նչ է, Աստվա՞ծ ես:

— Ոչ:

— Ֆառ՞ուստն ես:

— Ոչ: Մարդ եմ, բայց մի փոքր տարբերվում եմ մյուսներից:

— Մի փո՞քր:

Զարմանալի է, բայց կատարվածն այնքան բնական համարեցի, ասես ամեն օր ճամփորդում էի ժամանակի մեքենայով: Հիշեցի Կաֆկայի Զամզային, որը փոխանակ մտածելու, որ ուտիճ է դարձել, մտահոգվում էր, որ աշխատանքից կուշանա: Ես էլ ջուրը չտեսած շտապում էի ծովը մտնել: Վազեցի, ձեռք տվի ջրին. իսկական էր: Եկավ ինձ մոտ: Կրակը ջուրը մտավ ինձ կանչելով: Հանգչելու փոխարեն ավելի բոցավառվեց: Այդ պահին զգացածս հստակ որոշում էր դառնում: Կգնայի նրա հետևից՝ թեկուզ խորտակվելու:

— Մի օր քեզ կսկսեն գրավել խորությունները, դրանք քո առջև կամաց-կամաց կբացեն երկնքի խորհուրդները: Աշխարհա զգացողությունդ կփոխվի աշխարհատեսության: Աստվածաշունչ,

Բերտրան, Ռասել, Մոնտեաքյու և Ֆերգյուսոն պետք է ընթերցես: Տարիներ անց կծիծաղես, որ ժամանակի մեքենա ես փնտրել, քեզ կհուզի միայն ներկան: Դու կսիրես ինքդ քեզ, կգիտակցես, որ բնությունից լավ վիրաբույժ չկա, ու թերությունները քո առավելություններն են: Տարիներ անց դու կգրես ոչ թե ժամանակի, այլ մարդու մասին: Իսկ հիմա պետք է «Վերափոխման ծրագիր» անցնես: Վերափոխվել նշանակում է նմանվել Աստծուն, վերադառնալ քո աստվածային ես-ին: Իսկ դրա համար նախ և առաջ պետք է փոխես անունդ: Այսուհետև քո անունը կլինի ոչ թե ծով տխրություն, այլ ծով ուրախություն: Անունը մեր ինքնությունն է, մեր էությունը, եթե ուզում ենք մեծ գործեր անել, մեր մեջ մեծ փոփոխություն պետք է ունենանք: Աբրամը դարձավ Աբրահամ: Աստված համ տվեց, և նա դարձավ ոչ միայն իր, այլև ազգերի հայր: Սիմոնին, որին Պետրոս անվանեց, օժտեց ժայռի ամրությամբ: Պետրոսն ամենաշատն էր սխալվում, ամենաանհանգիստ հոգին էր, բայց սիրո մեջ ամենահաստատակամն էր: Պատահական չէ, որ Վատիկանի կաթոլիկ տաճարը հենց նրա անունով է:

Հանդարտ ծովի մեջ կանգնած էինք իրար դիմաց: Ներսս փոթորիկ էր: Հասկանալով խմում էի նրա բառերը: Հանկարծ ձեռքը գլխիս տարավ, բութ մատն աջից ձախ սահեց ճակատիս վրայով, մակագրեց.

— Մարիադա:

Այդ պահից նա ինձ փոխանցեց ժամանակի ու տարածության մեջ կողմնորոշվելու բանալին:

Գլուխ 1

Մնդոննան

20 տարի անց մայրս վերջապես որոշել էր գրել իրեն տանջող, ներսից քայքայող պատմության մասին: 1999-ի հոկտեմբերի 27-ին, երբ ԱԺ-ն ցնցվում էր կրակոցներից, Բաղրամյան փողոցի տներից մեկում էլ մի կին էր ցնցվում, որի ողբերգությունն անաղմուկ էր մնալու: Երկրի վիշտն էր հաղթելու: Բերանը կողպեց, քսան տարի փորեց, բայց ցավն այդպես էլ չթաղեց, այդ հողի վրա գժված՝ մի առավոտ ոստիկանություն գնաց ու դիմում գրեց՝ բռնաբարության համար հորս դեմ քրեական գործ հարուցելով:

Շանս ունի՞ անցյալը: Որքանո՞վ բանական ու որքանո՞վ ցնորված կարող է լինել 20 տարվա մենախոսությունը: Գրողն ինքն իրեն շատ հարցեր է առաջադրում, բայց հաշիվ չի տալիս: Մորս մահն առեղծվածային էր, ինչպես և՝ հորս: Հիմա մտածում եմ՝ ավելի լավ է մարդ կյանքում մի անգամ մի մեծ քաք ուտի, բայց հանդարտվի, քան էգոիստ հիվանդի պես ամեն օր «արյուն վերցնի» ու կեղտոտի, որտեղ պատահի: Ուղիղ եթերում լուրեր վարելիս՝ այնքան հանգիստ էր, բայց ոչ ոք չգիտեր՝ ինչ է կատարվում տանը: Նրա դևերին հայրս անմեղ անուններ էր տալիս՝ «այծիկներ», «հիստերիաներ»,

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark